

« Նահապետի շինութեան աւերակները » եւ այլն:

Բուն բերդին հարաւ-հիւս.՝ գրեթէ մէկ խորանարդ մեղր մեծութեամբ՝ յղկեալ ահագին քարերով պարիսպներ կան շինուած, լերան գոտիէն սկսեալ եւ աստիճանաբար վեր ելած. այժմ քարերէն ու մանր հողին տակ ծածկուած են, ուրիշներ գլորուելով ինկած են գետնի վրայ, եւ ոմանք ալ ոչխարի նման ցրուած են՝ մօտակայ դաշտին երեսը: Յիշեալ քարերէն շատ կը գտնուին նաեւ մերձակայ գիւղի գերեզմանոցին մէջ, եւ գրուած են իրրեւ տապանաքար. նոյնպէս գիւղին շատ մը տուներու հիմնաքարերը նոյն բերդին հսկայ քարերէն են. այսքան քարեր ինչպէ՛, տարուելէ եւ ցրուելէ վերջ՝ տակաւին բերդին պարիսպներուն վրայ կը մնան երկու երեք կարգ շարուած կանոնաւոր Հայկայ ձեռակերտին մնացորդները:

Այս տեղէն վեր ելլելով կը հասնինք ընդարձակ տեղ մը, որ լեռնադաշտի կը նմանի, ուր երկու քարայրներ կը տեսնուին, իրարմէ փոքր ինչ հեռաւորութեամբ. միակտուր քարի մէջ փորուած, որմէ ներս երթալով կ'ընդլայնին եւ կը տարածուին բերդին մէջ: Տեղացիք կ'ըսեն թէ ներսը սատանայ կայ, եւ չեն ուզեր ներս մտնել: Այս քարայրները աւանդութեամբ ջրամբար կ'անուանեն, որոնց չըրջապտը երկու երեք փոքր սենեակներու հիմերը կը տեսնուին:


Գիւղացիք փորելով բերդը՝ հոն գտած են տէգի, նետի, նոյնպէս խեցեղէն ամաններու կտորուանքներ»⁹:

Հոս կը վերջանայ Միրախուրեանի նկարագրութիւնը, ուր կը տեսնուի որոշ հին Հայկայ բերդին իրական պատկերը:

Ասոնց վրայ կու գան լոյս սփռել արդի հնարայիններու տեսակէտները եւ անոնց դաժան արձանագրութիւնները՝ ուրարտական լեզուով. Պօլ-տաղ ըստած լերան կողքին գտնուած է հսկայ քար մը, որ հաւանաբար Հայկայ բերդէն ինկած է, որուն վրայ կը կարգացուի հետեւեալ արձանագրութիւնը ուրարտական լեզուով¹⁰. Սարգուրիս Բ.ի մէկ շինութեան յիշատակարանն է, ուր կ'ըսուի. «Խալթեանց մեծագորաց Սարգուրիս Արդխտինեան դայս ազարակ - հարի - շինեց 15,600 քափի տարածութեամբ». ասիկա երեւան կը հանէ ուրարտական շրջանի մը սկզբնաւորութիւնը եւ մեզ կը տանի շատ աւելի հեռու թուականներ, ուրարտական պատմութեան: Ըստ բեւեռագէտներու՝ Հայկայէն բերդը նոյն է Սարգուրիսուրա ամրոցին հետ, որ շինուած է երկու Սարգուրիսներէն. եւ Սարգուրիսուրա նոյն ամրոցն է որ շինուած է Պօլ-տաղի լերան վրայ: Ուրեմն Սարգուրիսուրա մեր հին Հայկայ բերդի մնացորդներն են, շինուած Սարգուրիսէն եւ աւանդութեամբ ընծայուած Հայկ նահապետին¹¹:

Ուստի կ'եզրակացնէ Քասունի թէ Պօլ-տաղ լերան ստորոտը շինուածը Աստուածաչէն գիւղն է, ուր գտնուած է Սարգուրիսի արձանագրութիւնը. յետոյ Հայկայ բերդը կոչուած¹²:

Հ. Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
(Շարունակելի)



ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԾՆՆԻԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Հակառակ բազմաթիւ յատկութիւններու որ ցոյց տուած է Ե. Դուրեան Սըր-բազանը իր երկար եւ բեղումնալից կեանքի ընթացքին, մեր գրականութեան մէջ գինքն անմահացնողը իր բանաստեղծական շունչն է:

Իբր ուսուցիչ՝ կրօնական եւ ազգային վարժարաններու մէջ, նա ստիպուեցաւ կամաց կամաց մշակել եւ խորանալ մասնաւորապէս գրաբարի եւ աշխարհաբարի մէջ, աւանդել կրօնական եւ իմաստասիրական նիւթեր, որոնք դասարանի բեմերէն վեր չբարձրացան. եղաւ բաւ ուսուցիչ՝ ոչ միջազգային իմաստասէր մը:

Գլխաւոր պոզոտան ուսկից քալեց՝ դէ-

պի գրաբարի անսահման աշխարհը կը տանէր, եւ ինքը առաջնորդ ընտրեց հին հեղինակներէն աւելի Բագրատունի մը իբր գրաբարի անհասանելի վարժապետ, Հիւրմիւզ մը իբր ջնորհքի եւ նրբութեան ուսուցիչ, եւ Ալիշան մը բանաստեղծութեան անսպառ ներշնչարան:

Սակայն Ե. Դուրեան սնանելով հանդերձ դասական գրականութեամբ, հեռացաւ անկից եւ թօթափեց ինչ որ կար կեղծ պառնասեան պատմուծան եւ վրձնական քայլերով անցաւ արդի գրականութեան սեմէն ներս՝ կրօնականի սքեմը հազած: Այդ սքեմը տարաւ ոչ միայն իբր կղերական եւ Պատրիարք, այլ միակ

9. Միրախուրեան, էջ 147-150:

10. Մայն, 62: Քորփուս, 137:

11. Ադոնց, Պատմ. Հայոց (Քրանս.), էջ 234-4:

12. Քասունի, Նախ. Հայաստ. էջ 479-482:

հանդերձանքն եղաւ իր քերթուածներուն եւ ապրուած բանաստեղծական կեանքի մը փակեղը:

Իր բանաստեղծական ժառանգութիւնը քանակով շատ չնչին է. երկու փոքրիկ հատորներ. Արսէն Երկաթ մէկ օրուան մէջ պիտի գրէր, ինչ որ Ե. Դուրեան՝ թերեւս տարիներ դուռ, սերմանելու եւ հնձելու համար իր հոգեկան ծաղիկները:

Յաճախ բնութիւնը խենթ քմահաճոյքներ ունի, հարուստներու բուրաստաններուն կը զլանայ անմահական ծաղիկներ եւ զանոնք կ'աճեցնէ աղքատ ընտանիքի մը փրատակած պատին տակ, կամ առկայ՝ ճրագը աւելի խոր կը թափանցէ զգայուն հոգիներուն մէջ քան շողջողուն ջահեր՝ ոսկեղրուած պալատի մը մէջ: Այսպէս եղաւ նաեւ Դուրեան ընտանիքին համար: Համեստ տան մը օճախէն պիտի բարձրանային երկու բոցեր, մին ալեկոծ եւ խռովայի, միւսը խաղաղ եւ համակամ մարդկային տենչերուն հանգէպ:

Պետրոս իր վիպապաշտ հոգիով, իր երազային սիրով պիտի տառապի կեանքի սեւ ճակատադրին առջեւ ծնրադիր:

Սիրելի կ'ուզեմ դեռ, ապրիլ ու ապրիլ:

Մինչ Եղիշէն վստահ քայլերով կը բարձրանայ Յիսուսի հետ մինչեւ Գողգոթա մինչեւ խաչելութիւն:

Ա՛հ, միթէ կրնամ գալ Քու ետեւէդ երբ խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա:

Բայց ի՞նչ սերտ հրապոյր, ի՞նչ բուռն լուծ է դա՛

Որ զիս դէպի հո՛ն ալ կ'տանի Քեզ հետ:

Ծնողական սիրոյ նոյն ծառին վրայ հասած երկու սրտերու մէջ դժուար է զգացումի եւ տենչերու նոյնութիւն գտնել, բացի երեւակայութեան եւ զգացումի այն հասարակաց գիծէն, որ կան աշխարհիս բոլոր բանաստեղծներուն մէջ:

Պետրոս Դուրեան իր եղբարար ճակատագրով մեզ պիտի յուզէ, լացնէ, խուսափող զեղեցկութիւններուն ետեւէն պիտի տանի: Պիտի լսենք իր կանչերը,

սիրոյ արձանին դիմաց աղօթող հոգի մը պիտի տեսնենք իր քերթուածներուն մէջ, որ աղերսանքով կը բանայ իր սիրտը, զայն արեւով, կեանքով լեցնելու, սիրով վառելու:

Եղիշէ Դուրեան մինչդեռ մեղի խորհրդածել կու տայ: Միտքը կը դառնայ, տիրապետող զգացումները շուքի պէս կը հետեւին իր խոկումներուն: Դուրեան կ'առաջնորդէ ընթերցողը հոգեկան բարձր եւ անձանօթ աշխարհներ. կ'առուած եւ չափուած քայլերով. հանդարտ զնայքով: Յիսուսն վերելքներ չունի, ոչ սրտի պոռթկումներ, այլ աչքերը սեւեռած դէպի անափ երկինքներ, պիտի ըսէ ընթերցողին. Ետեւէս եկուր, Սաղիմեան յիսուսադրո՞ւմ սրբավայրերը ապրելու իր հոգեկան արեւուն տակ:

Տաղանդաւոր առաջնորդ մը սուրբ տեղերու եւ աւետարանական աշխարհին, ուր ամէն վայրի եւ ամէն աստուածակերտ դրուագի վրայ պիտի կատարէ իր առնչքնող խորհրդածութիւնները:

Պիտի սիրես երկարօրէն չըճաղայիլ իրեն հետ, պիտի զգենուս հոգեկան արեւի մը քաղցր ճառագայթները. պիտի ուզես, մենութեան ատեն, աղօթքի պէս կրկնել իր հոգիացնող տողերը:

Եղիշէի մէջ լուծ են իր սիրակարօտ եղբոր սիրտն ալեկոծող հոգիները. այնտեղ հնչած է Յիսուսի հրաշագործ ձայնը – Դադարեա՛, կարկեաց – եւ չկան կիրքի եւ երազային տենչերու ծփանքներ:

Եղիշէ Դուրեան կրօնական երկիւղածութեամբ կը վերլուծէ Աւետարանի դրուագներն ու առակները. թոյլ պիտի չտայ որ իր խոկումները եւ Սաղիմական սրբավայրեր, երանական դէմքերու հետ՝ արատաւորութիւն դերդ Մագդաղիմէն մեղրամու՛, ամբողջիտեան յաւերժահարսերով. եւ ոչ ալ ցանկութիւնն աստուածայայ խորտակման գիշերներու մէջ. այլ հետեւելով Աւետարանի հոգիին եւ աստուածաշունչ առակներու խոր զեղեցկութեան, պիտի բացատրէ, պիտի զարգարէ անանց ծաղիկներով, լեցնելու համար

ընթերցողի հոգին երկնային քաղցրութեամբ:

Ընտրելով հանդերձ ամբողջապէս գրեթէ կրօնական նիւթեր, ձեռքը չի տար ձանձրանալի եւ անվերջանալի քարոզներ, տափակ եւ անարուեստ. այլ զիտէ ընտրել առինքնող պատկերներ, հպանցիկ շարժում տալ. կենդանացնել եւ ճաճանջաւորել իր խոկումները: Իր թռիչքը միշտ կապոյտին մէջն է. ոչ մանուածապատ ուղիներ հոգին վրայէն: Նման մեծ թիթեռնիկի մը, կը սիրէ անմեղունակ թափահարել բուրաստաններուն վրայ եւ կանգ առնել հոն ուր բուրեան վարդեր կ'աճին, ուր զեղեցկութիւնը չնաշխարհիկ երանգ դրած է: Այդ ընտրեալ վարդերը չունին աշխարհիկ բոյր, այլ հոգեպարար խունկ եւ անոնց վրայ հանգող ճաճանջները՝ մոմերու քաղցր լոյսեր են:

Ե. Դուրեան Սրբազան իր ընտրած նիւթերուն խորութեան եւ բանաստեղծական արժէքին համեմատ տուաւ նաեւ քերթուական արուեստի կատարելութիւն: Նիւթը անանց ձևի անտաշ աղամանդ է, ձեւը առանց նիւթի խամաճիկի պաճուճանք: Խուսափելու համար երկու թերութիւններէ՝ ջանաց, գրեց ու սրբագրեց եւ կատարելութեան հասցուց զանոնք: Քիչ գրել՝ լաւ գրել: Իր Պետրոս եղբայրը պիտի նախանձէր Եղիշէի արուեստին վրայ եւ վանեցի ոսկերիչ մը պիտի գըտնէր աշխատանքի նրբութիւն եւ ճաշակ: Պիտի տեսնէր զուսպ պարզութիւն եւ զարդարանքի չափ ու սահման:

Անշուշտ ամէն քերթուած նոյն կատարելութիւնը պիտի չունենար, սակայն անպայման միջակէն շատ վեր՝ չնորհք եւ նրբութիւն պիտի ունենային, յայտարար նշան՝ բացառիկ տաղանդի:

Իր բժական դրութեան համար կարելի է բացատրել թէ ինչո՞ւ այնքան սակաւթիւ եղան իր քերթուածները. չի բաւեր ուսուցչական կամ վարչական զբաղմունքներու բացատրութիւնը: Պետրոսին լարը

մահը կտրեց. Եղիշէին լարը՝ բարձր գեղարուեստի հանգէպ ունեցած երկիւղը:

Եղիշէ Դուրեանի քերթուական արուեստն ու մտքի խորութիւնը չենք փրնտներ իր «Դրուագներ Մանուկ Յիսուսի կեանքէն» հատորիկին մէջ: Դա կաղանջէք մ'է հայ մանուկներուն համար. հետեւաբար, ըմբռնելի՛ փոքրիկներուն մտքի հասողութեան. հոն բարոյախօս վարդապետը, հոգեւոր դաստիարակը պարզ ու ճով, առանց իմաստասիրական խորութեան պիտի պատկերացնէ Յիսուսի մանկութենէն օրինակելի դրուագներ, պիտի հանէ բարոյական խրատներ, բայց միշտ զգացնելով թէ գրողը անտաղանդ մէկը չէ, կը պահէ իր անսեթեւեթ վայելչութիւնը. երբեմն փոքրիկ կայծեր լոյս պիտի տան. Յիսուս Մանուկին հրաշագործ ձեռքերով կաւէ թռչնիկները կեանք պիտի առնեն, կամ դժնիկը ձերմակ պիտի ծաղկի: Յիսուսի մանկութեան անվաւեր աւետարաններու դրոյցները դարձեալ պիտի սիրուին մանուկներէն, մինչ Խրիմեան Հայրիկ պիտի չկարենայ Եղիշէին պէս հաճելի բուրաստաններ ստեղծել Պապիկ ու Թոռնիկով, կամ Դրախտի ընտանիքով:

«Հովուական սրինգ»ը ուրիշ բան է: Ե. Դուրեան մեզ կը տանի մտքի եւ հոգիի տաճարը. սիրտն եւ զգացումը կը հետեւին խնկարկելով Աւետարանի դէմ՝ որ բացուած է մեր առջեւ, եւ Ե. Դուրեան կարգալով կը մեկնարանէ եւ ցոյց կու տայ առակներուն կամ Յիսուսի խօսքերուն թաղուն իմաստները:

Երեսունչորս քերթուածներ են, որոնք ուղղակի կամ անուղղակի կրօնական բրնոյթ կը կրեն: «Հովուական սրինգ» վերնագիրը թերեւս լրիւ չբացատրէ նիւթին բովանդակութիւնը. բայց ի՞նչ կարեւորութիւն ունի խորագիր մը. բանաստեղծական մէկ բոպէի ծնունդ է, հաւնած է հեղինակը եւ իր քերթուած մը գետեղած գրքոյկի ճակատին: Թերեւս երազած է Բեթղէհէմի հովիւ մը՝ որ որինդով կը

թույլ է հոգեկան գեղեցկութիւններ վերա-
կոչելով:

Արիւնգ քերթուածը չէ կարելի նախա-
մուտ մը համարել, ուր պիտի ամփոփ-
ուէին մատեանի ընդհանուր գիծերը. ան-
կախ քերթուած մ'է եղէգի մասին որ՝
սրինգ եղած է, խորոտիկ լուռ խոկացող
կուրծքի մը մօտիկ, որ պիտի երգէ ան-
ծայր ամայութեանց մէջ անհունի շուն-
չով:

Պատահական չէ առաջին քերթուածը
«Կը սիրե՞ս զիս»:

Ե. Դուրեան սիրոյ ճամբով պիտի կա-
րենայ վեր բարձրանալ դէպի խաչը, պի-
տի ըմբռնէ Անտառիկին խորքը կազմող
հօր բուռն սէրը դէպի ստահակ որդին եւ
ներդուլութեան աստուածային գեղեցկու-
թիւնը: Խաչը մտածուած ու խոր իմաստ-
ներով եւ զգացուած սրտով սիրոյ գերա-
զոյն արտայայտութիւնը պիտի կազմէ
եւ այս լարին վրայ ընթերցողը պիտի լսէ
Նայումաժը, Ետեւէս եկուր, Վերջին
վայրկեանը, Եմմաուսի ճամբորդները,
եւ այն: Ստէպ պիտի հանդիպինք պայ-
մանադրական Եթէներու, որոնք իր սի-
րած կրկնակները պիտի կազմեն, սակայն
ոչ պատկերի մը կամ մտածութեան մը
պակասէն հարկադրուած, ինչպէս մեր
արեւելահայ բանաստեղծները, որոնք ըս-
տէպ կը մեղանչեն այս կրկնակներով ա-
ւելնի նուազում ցոյց տալով, այլ Դու-
րեանի մէջ հեղհեղէտ ու ժողովրդեան կը
հասնի որոշ վերջակէտի մը որ անէժք է.
Հարթին (ոսկեղէն) նըման դառնամ փռշի:

Կամ Նայումաժ-ի գեղեցիկ քերթուածին
մէջ, Քանի անգամ-ներու զանազանեալ
սրտկերներով, պիտի գտնենք լաց եւ
զղջում:

Օր մ'ալ դարձար ինձ լըռիկ
Ի՞նչ պակուցիչ բան մը կար մէջն աչերուդ
Որ երբ նայումաժի ինձ ուղղեցիր լացի ես
Կամ քափուած ի՞նչ կար սրտիս խորը
Որ գոջացի դառնապէս:

[մութ

Երբեմն կը զգացուի Ե. Դուրեանի

քերթուածներուն մէջ բառերու եւ տա-
ղաչափութեան փնտռութիւններ, կարծես
արուեստակեալ սողեր ըլլան, սակայն
ըստ իս կատարելութեան իր ձգտումն է
որ զինքը մղեր է յանդերու կատարելու-
թիւն եւ բառերու ճշտութիւն փնտռելու,
ըլլալու համար հայերէնի կարօտ եւ ան-
փոյթ զրոյներուն օրինակ:

Հովուական սրինգ-ին մէջ կան նաեւ
խումբ մը քերթուածներ, որոնք անուղ-
ղակի կապ ունին իր կրօնաշունչ ուղղու-
թեան հետ: Այսպէս Արիւնգիս, Լուսնի
տակ, Անտառիկ մէջ, Աղի արձանը եւն.,
պիտի յիշեցնեն սիրած ինքնայատուկ ոճը,
խորհրդապաշտ հոգին, գեղեցիկ իմաս-
տութիւն մը քնարերգութեան լարերով
երգուած: Նա զրեթէ ամէն քերթուածի
վերջաւորութիւնը անակնկալ գիւտով մը
կը կատարէ, այսպէս Աղի արձանը պիտի
վերջացնէ.

- Կուրծքին տակ պինդ բաբախեց տրոփ
մը քափուն -

Շուշանի բո'յրը գոր շնչած էր երէկ,
Տատրակի ձայնը գոր լըսած էր այգում
Արշալոյսէն քաղած շողերն ալ բեկբեկ
Իրեմն ամէն հեշտամեքերով աղուանոյշ,
Իր պաշտպանին մէջ խրտացած կարծեց
կիմն...

Ու դուստր մարդկան, ուզեց նայիլ ամ-
բգոյշ
Իր ետեւէն եկող աղուոր հրեշտակին...

Նոյն անակնկալ վերջաւորութիւնը պի-
տի գտնենք Պուտտա եւ Յիսուս բաղդա-
տական քերթուածին մէջ, կամ մաղթանք
մը, աղօթք մը բանաստեղծութեան նիւ-
թին համեմատ, տալու համար գեղեցիկ
վերջալոյս մը, ինչպէս պիտի պատկերա-
նար Յիսուսի օրերուն Երուսաղէմի վրայ:

Ընթերցողն անցնելով Յիսուսի ծնուն-
դէն մինչեւ Դողդոթա, երթալով Եմմա-
ուս տրտում եւ թախծալից կորսուած
յոյսի մը համար, ամէն էջի վրայ հոգե-
կան սփոփանք պիտի գտնէ. կարծես աղօ-
թամատոյց մը ձեռքին մէջ կը խօսի Աս-

տուծոյ հետ, կամ զղջման ցաւեր կը զգայ
իր սրտին խորը եւ անպայման սրահանջ
մը կայ իր ներսը գիմելու ներշնչուած
Մաղթանքով առ Հոգին Սուրբ, որ տայ

Կայք մը ոտի. նայումաժ մ'ի վեր
Կ'ուզեմ, այո', Հոգւոյդ ի սէր
Կ'ուզեմ ըլլալ հոգի մը նոր: ...

Երկու փոքրիկ մատեաններ, ինչպէս
աղանիւրի զոյգ թեւեր, Դրուագներ Մա-

նուկ Յիսուսի կեանքին եւ Հովուական
սրինգը բաւական զօրութիւն ունին միշտ
վեր բռնելու եւ գեղեցիկ կապոյտին հաս-
ցընելու Եղիշէ Պատրիարք Դուրեանը. եւ
արդարօրէն իրաւունք կու տան բոլոր ա-
նոնց որ անդամ մը եւս վառեցին իրենց
ջահերը որակաւոր բանաստեղծի մը հա-
րիւրամեակին ընդառաջ երթալու համար:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ



1914 թուականը կանխող թրքահայու-
թեան վեց վաղանցիկ երջանիկ տարիներ-
ու ընթացքին, Թուրքիոյ մէջ ապրած ու
ներկայիս տակաւին ողջ եղող հայեր եթէ
կան, ինչպէս նաեւ Կովկասէն եւ Եգիպ-
տոսէն, անոնք անշուշտ կը յիշեն, հայու-
թեան պարծանք ջութակահար «վիրի-
նոյ» Դաւիթ Դաւիթեանը, ունկնդրած
ըլլալով անոր նուազածութիւններուն կամ
այն ատենուան՝ հայ եւ օտարազգի մա-
մուլի հրատարակութիւններէն լսած ըլ-
լալով անոր համբաւը:

Դաւիթեան՝ չիկահեր, կապուտաչուի,
միջահասակ, բարեկազմ, համեստ, զգա-
յուն նկարագրով, համակրելի երիտա-
սարդ մըն էր, եւ մտերմական շրջանակի
մէջ՝ զուարթարան:

Ծնած է Տրապիզոն, 1880ին, բարեկեցիկ
ծնողքէ: Իր նախնական ուսումը կ'ընէ
տեղւոյն Միսիթարեան վարժարանին մէջ
լուսահոգի Հ. Մինաս Վ. Նուրիխանեանի
տեսչութեան շրջանին, ուսկից յետոյ, իր

ուսումը շարունակելու համար կ'ուղարկ-
ուի Վենետիկ՝ Մուրատ-Ռափ. վարժա-
րան, ուր եւս յաջողութեամբ կը լրացնէ
իր դասընթացքը:

Պատանեկան տարիքէն ըլլալով ջերմ
սիրահար մը ջութակահարութեան, նոյն
ճիւղին համար, Տրապիզոնի մէջ իր առա-
ջին ուսուցիչը կ'ըլլայ Տիգրան Կիւրեղեան
- բարեխիշտակ Իգնատիոս Արքեպիսկ.
Կիւրեղեանի, Վենետիկ Միսիթարեան
Միսիթարեան Արքահօր եղբորորդին -,
որ տարիներ առաջ աշակերտած էր Վենե-
տիկ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին
մէջ ու հոն՝ իտալացի դասատուէ մը ու-
սած ջութակահարութիւնը:

Դաւիթեան եւս, Վենետիկ իր աշակեր-
տութեան ընթացքին կ'ունենայ ջութակի
ուսուցիչ իտալացի ջութակահար մը, որ
տեսնելով իր այս ժրջան աշակերտին
արտակարգ ընդունակութիւնը, մասնաւոր
հոգածութիւն կ'ընծայէ անոր յառաջագի-
մութեան: